« տատեալ են վերստին, և զմիւս պետրոս քիւթիւռն փախուցեալ, և զերեք կամ
« ըստ ոմանց զհինգ վարդապետս սպանել տուեալ են։ Եւ զմինն ի սոցանէ ի պա-
« տարագէն յետ սրբացուցման, մինչ հասեալ յայն տեղին ուր յիշէ զկաթուղիկոսի
« անունն պետրոսին, հասանին բռնաբարողք բարբարոսք, գանակոծ առնելով յար-
« տաքս ձգեն և մահացուցանեն։ Ղազարն աստ զկօնտակ ուղարկեալ առ ժողովուրդ
« և առ փաթրիքն, և զնա անմեղացուցանելով շողոքորթէ. յետ ընթեռնլոյն զկօն-
« տակն ի լուր ամենեցունց, դայսէրցիք և աճէմներն զշշնչմունս բարձեալ, թէ և
« իբրու գայթազղեալ, թէ դուք սեազլուիքդ էք պատճառ այսմ աղմունքի և սպանու-
« թեան վարդապետաց ի սուրբ Էջմիածին» (Գր. Հ. Միքայէլ Վ. առ Մխիթար,
1748 հոկտ. 25 չուէ գիրս [Կ. Պոլիս])։

Հ. Միքայէլ հետևեալ նամակին մէջ կու տայ նաև բաւական մանրամասն վկա-
յաբանական տեղեկութիւն մը։

Գիտենք ազգային հալածանքներու շրջանէն ընդհանուր ծանօթութեամբ մը,
որ եղած են անձինքներ՝ որոնք նահատակուած են՝ անդրդուելի մնալնուն համար
իրենց հաւատքին մէջ։

Ուրախ ենք որ Հ. Միքայէլ Վ.ի արդեամբք կրնանք հոս ներկայացնել տեղե-
կութիւններ անոնցմէ միոյն՝ Ստեփան անուամբ քահանայի մը վրայ, ինչ որ վկայի
մը որոշ պատկերը կու տայ. թէպէտև ամբողջական չէ, որովհետև նոյնքան որոշ պէտք
է ըլլայ անոր վախճանի տեղեկութիւնը, որ դեռ կը պակսի։

Գերյարգելոյ Աբրայ Հօրդ մերոյ, տեառն Մխիթարայ
Ամենաժարանութիւն Վարդապետի

... Երկու ամիս յառաջ, զղազար կաթուղիկոսն, զոր հերքեցին, նզովեցին, բանա-
դրեցին, անընդունակ արարին, և զանունն յիշատակելոյ ի պատարագն ջնջեցին, Նա
իշխանութեամբ նոր Շահին վերստին հաստատեցաւ յաթոռ իւր. սկսան ընդունիլ և
յիշատակել ի պատարագն։ Զարագունեղ և անգէտ Աթանաս վ. որ գնաց առաջնորդ
թօխաթու, անդ և ի ս[ե]բաստիա, զմեծագոյն հալածանս յարուցեալ ուղղափառաց։ Հինգ
և վեց ամ յառաջ ընդ յարութիւն վ.ին, որ գնացեալ է առաջնորդ թօխաթու, և ընդ
ինքեան տարեալ է զայլ ոմն էտրենեցի վ. աշակերտ վախճանող յօհաննէս պատրիար-
գին, այն վ. ճգնազգեաց և բարի անձն մի, և անդ վախճանեալ. յարութիւն վ. զնա ի
յեկեղեցւոջն թաղել տուեալ։ Եւ յայժմ որ այս աթանասս գնաց անդ, լուեալ թէ
նոյն վախճանեալ վ.ն երբեմն ասացեալ է ուղղափառաց, թէ չիտակ է ձեր ճամբան, ինք
ևս լեալ իցէ ի ներքուստ ուղղափառ։ Մինչ աթանասն զայս լուեալ է զնմանէ, որք
պատմեալ են նմա, յայնժամ սկսեալ է ասել. Այն չունն, այն նզովածն, այն ուրացօղն,
ոչ է արժան յեկեղեցւոջն մնալ. բանալ տուեալ զտապանն, չորս և հինգ ամաց մեռելոյն
զոսկերս առաջի շանց արկեալ, և զայլ ոմն ուղղափառ ի յէջ եղեալ ի քաղաքն շրջե-
ցուցեալ...։ Ի գաղատիա ևս նոր չարագոյն հալածումն. զի ի թօխաթու գէորգ անուն
վ. մի, որ երբեմն ուղղափառ ի տունս պատարագեալ է ի գաղատիա, այժմ գնացեալ
անդ զհալածանս գրգռեալ, զտուն մի կոխել տուեալ են, զտէր ստեփան ամուսնացեալ
քահանայն, տեղացի, որ յառաջ ընդ այլոց կարգաւորաց փախստական աստ էր, իբրու
մի ամ է որ յետս դարձեալ գնաց, և ի ծածուկ կալով հոգայր զուղղափառս, զսա ըմ-
պանեցին, փաշային մատնեցին, 500 բիր ոտացն հարին. ներկայ գոլով չար վարդապե-
տաց և չարափառ աշխարհականաց դատախազք և անգութք, ասացեալ են. Ոչ միայն
ներքանացն այլ ի վերայ ոտիցն մատանց հարէք, որ մատունքն ջաղջաղիցին և թափի-
ցին. և ոմն հայ ի վերայ գլխոյն անկեալ, զի մի շարժիցի, և ասէր. Ուրացիր զլեսն.
իսկ նա ի յամենայն հարման յիսուս մարիամ կոչէր։

Ի յայսմ գործողութեան նուազի, իրիցկին սորին եկեալ լալագին և կողկողագին